

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԽՐԹՆԵՐ ԳՈՇ  
ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿԾԻ

ԱՌԱԿՆԵՐ



Հայպէր Հրատ  
ՀԼԿԵՄ Կենտրոնին Կից Մանկա - Պատանեկան  
Գրականությունը Բաժին  
ԵՐԵՎԱՆ 1951

ՆԿԱՐԻՆՆԻ  
Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ

Մ. ԳՕՏ, Վ. ԱՅԵԿՇԻ

Բ Ա Տ Ո Ւ

(Ու արմանակոմ լառուո)

Այնտրադ, Երեւան, 1951

## **ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

**Հրատարակելով մեր միջնադարյան առևտրագիրներ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու ընտիր առակները, Պետրոսյան առաջին հերթին ի նկատի է ունեցել միջնակարգ դպրոցների միջին և բարձր դասարանների աշակերտության պահանջները, ինչպես նաև մասսայական ընթերցողների ցանկությունը:**

**Առակները նպատակադարձաբար համաեցինք ռուսալեզու թարգմանված ժամանակակից գրականության հետ:**

ՄԻՐՔՐ ԳՈՇ





1.

**Մ** անգամ աստղերը հավաքվեցին  
իմի, և նրանցից ամենածերերն ասացին.

Մենք բազում ենք ու շատ: Ուրեմն ին-  
չո՞ւ չենք կարողանում լուսավորել ցերեկն  
ու գիշերը արեգակի և լուսնի նման:

— Որովհետև միաբանությամբ չենք  
վարվում, — պատասխանեց մեկը:

Եվ որոշեցին նախ հալածել ու փախցնել  
արեգակին. բայց երբ լուսինը ծագեց,  
հաղթվելով նրանից՝ աստղերը ասացին.

— Եթե մենք լուսնի լույսից այսպես  
աղոտացանք, ապա ի՞նչ կլինենք, երբ արևը  
ծագի:

Զղջացին ասույերը և խոստովանեցին,  
իլենց պարտու թյունը:







2.

**Մ** Ի անմիտ մարդ հունապի ծառը  
դժնիկ կարծելով՝ հարված տվեց նրան:

Ծառը զայրացավ և ասաց.

— Ով անազորուն, ծառը իր պտղից  
պետք է ճանաչել և ոչ թե տեսքից:





3.

**ՆՈՒՆՆՈՒ** և թզենին միմյանց հետ  
սեր անել կամեցան և քաղցրությամբ հա-  
մեմատվեցին. բայց նուան թթվությունից  
խորշեց թզենին, և լուծվեց նրանց դա-  
շինքը:







4.

**Մ**ՈՎԻ գորտերը խորհուրդ անելով՝  
ասացին.

— Ինչու ենք դեղնած ու փորներս ու-  
ռած խեղդվում ջրի մեջ, դուրս գանք ցա-  
մաք ու կյանք վարենք, ինչպես ուրիշ-  
ները:

Մի ծեր գորտ ասաց.

— Հայրս պատվիրել է ինձ, որ ծովի  
ապաստանը չթողնեմ, որովհետև բնությամբ  
վախկոտ ենք. գուցե դուրս գանք ու վա-

խենարով ետ դառնանք և մեր վախկոտությունն ուրիշներին հայտնի դարձնենք:

Բայց գորտերը չլսեցին ծերունուն ու դուրս եկան, սակայն ոտնաձայն լսելով՝ փախան իսկույն ու ծովը սուզվեցին դարձյալ:





5.

**Ա ՌՅՈՒՄԻ** ոտքը կոտրվեց. նա սկսեց տրտնջալ բոլոր կենդանիների վրա և ա-սաց.

— Դուք իմ հարկատուներն եք, որով-հետև գազանների իշխանն եմ ես, ինչո՞ւ ինձ համար զոհաբերություններ չեք անում, որ առողջանամ:

— Այն պատճառով, — պատասխանեցին կենդանիները, — որ մենք քեզանից պաշտ-

պանություն չտեսանք ոչ արջի ձեռքից,  
 ոչ գայլի և ոչ էլ գազանների ձեռքից և  
 մինչև անգամ դու ինքդ չխնայեցիր մեզ:  
 Մենք աստծուն պետք է զոհաբերություն  
 անենք, որ այդպիսի փորձանքի բերեց  
 քեզ:



ար:

աք:

դ:

5

1913

1 1/2



6.


**Ի ՄԱՍՏՈՒՆՆԵՐԻՑ** մեկը հարցում ա-  
յլ ծառերին և ասաց.

— Խնչն է պատճառը, որ դուք ինչ-  
ն բարձրանում եք, այնքան էլ խորը  
մատներ էք գցում:

Եվ ծառերը այսպես պատասխանեցին.  
- Ինքդ իմաստուն լինելով, ինչպես է  
գիտես, որ մենք չենք կարող այսքան  
դեր կրելով մեզ վրա, դիմանալ հող-  
առնությանը, եթե խորը արմատներ

չգցենք: Տեսնում մեր եղբայր հաճարի  
և փիճի ծառերը, որոնք թեպետև բազմա-  
ճյուղ չեն, բայց դարձյալ քամիներին  
ընդդիմադրել չեն կարող, որովհետև խորը  
արմատներ չունեն:






7.

Հ  
Ե  
Ն  
Ե  
Ր


**Չ** ԱՏԵՒ տոնին հավատացյալները հա-  
ղորդվելու եկան: Մի հովվի էլ համոզեցին,  
որ նա ևս հաղորդվի, բայց հովիվը երբ  
հաղորդությունը տեսավ, փախավ, ասելով.  
«Ոչ ճաշ է, որ ուտեմ, և ոչ ընթրիք»:  
Ու չհավանելով՝ թողեց ու գնաց:





Տ.

**ՉԱՆԵՐԻՆ** մեղադրում եր իրենց թագավորը, ասելով, թե ինչու եք ուտում ձեզանից մանր կենդանիներին: Եվ ձկները համարձակվելով ասացին. «Քեզանից ենք սովորում, որովհետև շատերը գալիս են քեզ երկրրպագելու, և դու, կուլ տալով նրանց, կերակուր ես դարձնում քեզ համար: Ուստի և մենք քեզանից սովորելով, հանդգնում ենք»:







9.

**Ա**ՌՅՈՒԾԸ, արջը և գայլը միասին ա-  
սացին մի անգամ.

— Մենք ինչո՞ւ ենք հում ուտում մեր  
որսը: Մարդկանցից մեկին բռնենք, որ,  
իրենց օրենքի համաձայն, կերակուր պատ-  
րաստի մեզ համար մեր որսից:

Եվ բռնեցին մեկին ու կարգեցին խո-  
հարար:

Մարդը նեղվելով նրանց ձեռքի տակ  
մնալուց, հնար մտածեց նրանցից ազատ-  
վելու: Ճեղքեց մի մեծ գերան և նրա ամեն

կողմում սեպեր դնելով, ասաց առյուծին  
ու մյուսներին.


— Օգնեցեք ինձ ճեղքելու այս փայտը:  
Դրեք ձեր ձեռքերը ճեղքվածի մեջ և ձգե-  
ցեք:

Երբ նրանք դրին ձեռքերը, մարդը դուրս  
քաշեց սեպերը: Գազանները մնացին կաշ-  
կանդված: Այդ ժամանակ մարդը կացինն  
առավ և ասաց.

— Նախ առյուծից սկսե՛նք:

Ասաց և ջարդեց բոլորին:





10.

**Մ**ի անգամ վար անելիս եզը փախավ լծի տակից, բայց մշակը բռնելով, նրան կալը բերեց. այստեղից էլ փախչելով, բռնեց բերեց ու սայլին լծեց: Սայլից էլ փախավ, ու բերեց շատ բանի լծեց, վերջապես երբ եզը տեսավ, որ փախուստ տալն անհնար է, հնազանդվեց և թողեց իր փախչելու սովորությունը:





11.

**Ա**ՐՁԻ փորը ցավեց, դեղ հարցրեց  
աղվեսից, և սա ասաց.

— Մի բարեպաշտ մարդ դրա դեղն ունի,  
կերթաս նրա մոտ և նա մեղը կտա, որը  
շատ օգուտ է քեզ:

Արջը ճամփա ընկավ և երբ մոտեցավ  
գյուղին, շները հալածելով փախցրին նրան,  
և նա սկսեց մեղադրել աղվեսին:

Աղվեսն ասաց.

— Այն մարդը, որ քեզ ոչ շներից ազա-  
տեց և ոչ էլ դեղ տվեց, տգետ է և օրենքից


անտեղյակ: Արի քեզ տանեմ մի կրոնավորի մոտ, որը հմուտ է աստվածաբանութեան մեջ և բանիմաց է:

Երբ կրոնավորը տեսավ արջին ու աղվեսին, սկսեց նախատել նրանց և մերժել: Աղվեսը արջին ցույց տվեց մեղվանոցի մուտքը, ուր մտավ արջն անմիջապես, կերավ մի փեթակ և մեկն էլ վերցնելով ճամփա ընկավ: Կրոնավորն սկսեց անիծել աղվեսին, որպես վլասի պատճառի:

Աղվեսն ասաց.

— Ես մեղավոր չեմ, որ արջը սամարգութուն արավ: Մեղքը քոնն է, որ դեղի համար չտվիր մեղրը, այլ՝ փորի:






12.

**Հ**ՈՏՆ ընթանալիս շարժվում էին ոչ-  
խարների դմակները:

Այժերը նախանձից դրդված սկսեցին  
բամբասել նրանց և ասացին.

— Ինչու մեզ նման պարկեշտությամբ  
չեք քայլում:







13.

**Ա**ՌՅՈՒԾԸ բորենուն բռնեց գողության մեջ, և բորենին ասաց.

— Ես մեռածներին եմ ուտում, որովհետև կենդանիներին հաղթել չեմ կարողանում, իսկ դու ողջ-ողջ ես հոշոտում, որովհետև հզոր ես ու հաղթող:





14

**Փ**ԻՂՆ իր որդուն ավեց Պլատոնի մոտ, որ իմաստութիւն սովորի: Պլատոնը նախ սկսեց սովորեցնել նրան լսարանում չոքելը, բայց նա չէր կարողանում, ապա ասաց նրան՝ գլուխդ խոնարհիր, այդ էլ չկարողացավ:

Պլատոնն այն ժամ նրան հորը վերադարձրեց և ասաց.

— Որդիդ արժանի է թագավորի պա-



լատում լինելու՝ միշտ ոտքի վրա կանգ-  
նած, և ոչ իմ լսարանում, որովհետև ոչ  
նստել կարող է, ոչ գլուխ խոնարհել:





15.

**ՈՒՂՏԻՆ** խփեց իր խնամողը: Ուղ-  
տը բարկանալով՝ ասաց.


— Մի ծեծիր ինձ, երբ տրտում եմ ես,  
այդա թե ոչ կմեռնես իմ ձեռքով:

— Իսկ ի՞նչն է քո տրտմության նշանը,  
որ իմանամ և չծեծեմ քեզ:

— Երբ կտեսնես, — ասաց ուղտը, — որ  
իմ ստորին շուրթը կախ է ընկած, և ոտքս  
քայլելիս ձայն չի հանում, իմացիր, որ  
տրտում եմ ես:

— Ես ինչպես իմանամ,—ասաց ուղտա-  
պանը,—երբ շարունակ այդպես է՝ ստորին  
շրթունքդ կախված և քայլելիս էլ ոտքիդ  
ձայնը չի լսվում:






16.

**Գ Ա Լ Ի Ա Ն Ո Ս Ը** մի անգամ բանախոսու-  
թյունն արավ մարմնական առողջության  
վրա, ասելով, որ եթե մարդ զգուշ լինի  
ուտելու և խմելու մեջ, բժիշկներին գիմե-  
լու կարիք չի ունենա: Մի մարդ լսելով  
նրա բանախոսությունը, ոչ ուտում էր և  
ոչ խմում, որից չարաչար հիվանդա-  
ցավ և հանդիմանում էր Գալիանոսին, որը  
լսելով ասաց.

— Մի՞թե չգիտես դու, ով անմիտ, որ  
մենք մեր բնության արարիչը չենք, այլ  
օգնականը. և դու ինչու չհասկացար ու  
այնպես չվարվեցիր:






17.

**Պ**ԱՅԼՆ սպասուամ էր, որ այժ յամը ննջի,  
որպեսզի բռնինրան և ուտի: Բայց այժ յամն  
իմանալով նրա միտքը, չէր ննջում շատ  
օրեր, մինչև որ գայլը թմրելով՝ նիրհեց:

Այն ժամանակ եկավ առյուծը և կերավ  
գայլին:





18.

**ԿԱՏՈՒՆ** Թախանձում էր ողնուն.

— Որդուդ տուր ինձ հոգեգավակ, և  
դառնանք բարեկամ:

Եվ երբ բազում Թախանձանքից հետո  
ստացավ ուղածը, ասաց.


— Որովհետև դժվարահամբույր է որդիդ,  
ուստի մերկացրու նրան փշերից, որպեսզի  
հեշտ լինի գրկել նրան ու գգվել:

Ողնին խաբվեց և, մերկացնելով որդուն

փշերից, ավելց կատվին, որը կերավ իսկույն, իսկ ոգնին հեռացավ կսկծալից լաց ու կոծով:







19.

**Ո**ՐՄԷ ժամանակ բազեի ճանկերից ազատվեց հավբալի ձագը, և բազեն ասաց. «Թող դա գոհ լինի աստծուն». Հավբալի ձագը ծաղրելով նրան՝ ասաց. «Ինչ որ ձեռքովդ ես տալիս, այն է գոհ»:





20.

**Մ**ԻՏԷ տեսավ Ջալլամին, որը մեծ-մեծ ձուկ էր ածուճ, և ուզեց պատճառն իմանալ: Ջալլամը պատասխանեց. «Կրակ եմ կուլ տալիս, այդ է պատճառը, որ մեծ-մեծ ձկեր եմ ածուճ ես»: Ծիտը հավատարով, կրակ կուլ տվեց և մեռավ, չմտածելով, որ մեծ-մեծ ձկեր ածելու պատճառը Ջալլամի մեծ ութ յուկնն էր:





21.

**Չ** ԱՏԿԻ տոնին բոլոր թռչունները գնացին քահանայի մոտ և, խոստովանվելով, հաղորդվում էին: Նրանց հետ գնացին նաև սակուր և հողամաղը:

— Տեր հայր, — ասացին նրանք, — մենք խիղճ ասած բանը չունենք, մենք մկներ ու գորտեր որսացինք ու կերանք:


Քահանան մերժեց հաղորդություն տալ սակուին և հողամաղին, պիղծ կոչելով նրանց:

Նրանք գնացին, սուրբ ձագեր որսացին  
և բերին տվին քահանային, որն ասաց.


— Դուք առաջին անգամ չիմացաք խոս-  
տովանվել, որովհետև մկներն ու գորտերը  
ծերացած ու փետրաթափ թռչուններ են:


Այս ասելով՝ քահանան արդարացրեց  
նրանց և հաղորդեց:





**ԱՆՄԵՂԸ** անտառում սովորաբար միշտ աղաղակում է, մանավանդ կենդանիներ տեսնելիս: Երբ ձագը կամեցավ դրա պատճառն իմանալ, մայր անձեղը պատասխանեց. «Որպեսզի թշնամիներս ինձ միշտ արթուն տեսնեն և չմտածեն վրաս հարձակվել՝ որսալու նպատակով»:





23.

**Ճ ԱՅԵԿԸ** սագին աղաչում էր և ասում.

— Ես սևադեմ լինելով արհամարհված եմ բոլորից, իսկ դու սպիտակ ես ու պայծառ, խնդրում եմ ինձ սովորեցնես, որ քեզ պես սպիտակեմ:


— Շատ լավ, — ասաց սագը, — միայն թե ինձ պես միշտ լվացվիր ջրով:

Ճայեկը լսեց սագի խորհուրդը, բայց լվացվելիս ընկնում էր նրա սև փետուրը և դարձյալ նույն գույնով գալիս էր մեկ ուրիշը:

Ճայեկը կրկին գնաց սագի մոտ ու աղա-  
չեց, և սագն ասաց նրան.

— Լվացվելու հետ միասին իմ լեզուն էլ  
պետք է սովորես, որ կարողանաս ինձ  
նման լինել:

Ճայեկն հանձն չառավ մոռանալ իր լե-  
զուն և մնաց նույն սևադեմը:





(24.)

**Ճ**ՆՃԱՌՈՒՎՆԵՐԸ երամով գնացին արագիլի մոտ և աղաչելով ասացին նրան.

— Թույլ տուր մեզ ձագեր հանելու քորույնի մեջ և պաշտպանիր մեր ձագերն օձերից:

— Ինձ ի՞նչ կանեք, — ասաց արագիլը, — որ կատարեմ ձեր կամքը:

— Կաղոթենք, — պատասխանեցին ճընճ-դուկները, — որ ձեր ձագերը միշտ առողջ մնան և զերծ՝ վնասակար օգից ու եղանակից:



Եվ արագիլը տեղ տվեց նրանց:

Երբ ճնճողուկները ձագ հանեցին, օձը սուղաց դեպի բույնը նրանց ձագերն ուտելու: Արագիլն սպանեց այդ օձին և ման էր գալիս ամենուրեք, որ ոչնչացնի բոլոր օձերին՝ ճնճողուկների ձագերին փրկելու համար:

Առակս ուսուցանում է կարեկից լինել տկարներին ու թույլերին և ցանկանալ, որ ազատություն վայելեն նրանք:





25.

**Ս** ԻՐԱՄԱՐԳԸ իր գեղեցկութիւնն ամենքին ցուցադրելով՝ գովեստ էր ստանում. և նա մտածեց թագավոր դառնալ. Իմաստուններից ոմանք խրատեցին՝ չխաբվել, ասելով, թե ազգով պետք է թագավոր լինել: Բայց սիրամարգը չէր ուզում լսել նրանց և ցանկանում էր անպատճառ հասնել իր նպատակին: Թռչունների թագավորը լսելով այդ մասին, եկավ և կոտորեց նրա ձագերին և ազգատոհմը: Շատերն

էլ թևերն ու փետուրները դուրս քաշելով՝  
մերկացրին նրան: Այսպիսով, սիրամարգը  
ոչ միայն թագավորը չդարձավ, այլև զրկվեց  
իր գեղեցկութունից:

Այսպես ահա, նրանք, ովքեր հրապուր-  
վելով ցանկանում են հասնել անկարելիին,  
ոչ միայն ձեռք չեն բերում այն, այլև  
կորցնում են իրենց ունեցածը:





26.

**Ա**ՐՋԷ փորում էր մըջյունի բույնը  
և լեզվով հավաքելով նրանց՝ ուտում:

Մըջյունը հնար էր մտածում սպանե-  
լու արջին:

Գնում է նա պիծակի, գոռեիի, շնաճանճի,  
բրետի և այլ սրանց նմանների մոտ և  
աղաչում օգնել ազգասիրաբար: Նրանք,  
ցավակցելով իրենց ազգակից մըջյունին,  
խփում են արջի աչքին և ականջներին,  
որը գլուխը զարկում է քարին և վերք է

ստանում: Վերքը նեխում է, որից և առաջանում են որդեր: Արջը ցավի սաստկությունից զոչում է բերանաբաց: Որդերը նրա որովայնը մտնելով՝ խոցոտում են աղիքները, որից արջը տանջահար և ցավից ստիպված դիմում է դեպի ջրի հոսանքը և չափից ավելի խորը մտնելով՝ խեղդվում է:







(27.)

**Չ**ՂՁԻԿՆԵՐԸ լույսին նայել չեն կարող, մտնում են քարերի ճեղքը և կամ պատերի խորշերը, և, որովհետև գարշահոտ են ու վատատես, ցերեկը գունդ ու կծիկ են լինում և գիշերը հարձակվում:

Այդպես են բանասարկուներն ու ավագակները, որոնք արդարութեան լույսից փախչելով՝ սիրում են խավարը:






28.

**Պ**ՂԱՉԱԳՈՐԾՆ ու երկաթագործը մի-  
մյանց խնամի գառնալու ժամանակ վիճե-  
ցին. յուրաքանչյուրն իր արհեստն էր գո-  
վաբանում մեծաբարբառ, և նրանց մեջ  
հակառակություն ընկավ. գնացին ծերերի  
ատյանը: Ծերունիներն ասացին, թե հա-  
սարակաց օգտակարը պատվական է:






29.

**Ո**ՍԿԻՆ թագավորելիս պահանջում էր, որ բոլոր նյութերը երկրպագեն իրեն: Նա թագավոր էր կոչում իրեն, որովհետև թագավորի պատկեր էր եղել, և դրանով ամբարտաճանում էր արժաթագործների և ուրիշների վրա ևս: Բոլորը եկան երկրպագելու, բայց ցորենը չեկավ, ասելով. «Թող առաջ ինքը ոսկին գա ինձ երկրպագելու»:







30.

**Ս**ՈՍԻ ծառի մոտ երկրագործները  
ջրում էին բամբակի արտը:


Նրանք պատվիրում էին միմյանց զգուշանալ բամբակենու ծառերը կոխ տալուց: Սոսին բարկացավ, որ ծառ են կոչում բամբակենուն և ասաց.

— Ինչպէս կարող է դա ծառ կոչվել և համանուն լինել ինձ, որ հաստ եմ այսփան ու բարձր և շատ տեղ եմ բռնում:

Եվ բամբակենին անվախ՝ արձակ ու համարձակ պատասխանեց.

— Դու բարձր ես, արդարև, ու հաստ, սակայն անօգուտ, ոչ շինության համար ես պիտանի և ոչ պտղաբերությամբ՝ գովելի, այրելու համար էլ անպետք ես: Այլ միայն թանձր ստվեր ունես, որի համար ավելի շատ պարսավում են քեզ, քան թե գովում: Իսկ ես թեև փոքր եմ ու տկար, բայց բազմաշահ եմ և օգտակար բոլոր մարդկանց համար և՛ պահպանելու, և՛ քաղելու, և՛ դործելու ժամանակ, և վերջում էլ դառնում եմ հագուստ, ինչպես ոչխարների բուրդը, կտավատի վուշը և շերամի մետաքսը: Մինչդեռ դու դրանցից ոչ մեկը չունես, բացի միայն խոզակից:

Եվ այս հանդիմանություններից հետո սոսին լռեց:





31.

**Է** ՇԸ գնաց սար կրոնավոր լինելու,  
բայց վախենալով տեղի դառնությունից  
ու դժվարություններից, մանավանդ որ  
խրատում էին, թե ծույլ չպետք է լինի,  
փախավ այնտեղից, ասելով.

— Սառսն, խառան...

Այսինքն թե տաք է Սառանը, որտեղից  
եկել էր նա կրոնավոր լինելու:





32.

**Ա**ՂԱՋԱԿԸ մի քահանայի բռներով՝ կամենում էր սպանել նրան: Քահանան ուժ առավ, հաղթահարեց ավազակին և, ինչպես պետք էր, սկսեց տանջել նրան:

Ավազակն աղաչում էր և ասում.

— Ձե՞ որ քահանա ես դու և միշտ ասում ես «խաղաղություն ամենեցուն» ու սրա նման շատ բաներ, ուրեմն ինչո՞ւ ես տանջում ու չարչարում ինձ:

— Ո՛վ դու չարագործ, — պատասխանեց

քահանան, — ես հենց խաղաղություն պահ-  
պանելու համար եմ տանջում քեզ, որով-  
հետև դու չես սիրում խաղաղությունը:





33.

**Ե**ՐԵՐՈՒՄ կար շատ բարձր և անմատ-  
չելի մի լեռ: Մարդիկ կամեցան բնակու-  
թյուն հաստատել նրա վրա, որովհետև լի  
էր նա ամենայն բարիքով: Սակայն շա-  
տեր դժվարին նրա վրա բարձրանալը, թե-  
պետև ունեւր բազում ճանապարհներ: Նրանք,  
ովքեր նրա վրա բարձրանալու ժամանակ  
կանգ առան հանգստանալու, սայթաքեցին  
և ցած գլորվելով հասան մինչև հատակը,  
իսկ ովքեր չուզեցին դադար առնել, այլ

գավազանի օգնութեամբ աշխատեցին շարունակել վերելքը, բարձրացան լեռան վրա և հանգիստ կյանք վայելեցին:

Այսպես թուլակազմ անարիները մնում են կես ճանապարհին ու կորչում, իսկ հաստատակամները, համբերութեամբ իրենց նեցուկ ունենալով՝ վեր են բարձրանում ու հասնում նպատակին:



# ՎԵՐԴԱՆ ԱՅԳԵԿՈՒ







## ԳԱՐՈՒ ՀԱՇԻՎ

**Մ**՞ն մարդ կալից գրաստով գարի էր կրում տուն: Եվ քուռակը մոր հետ գնում էր ու ետ դառնում: Իսկ տանը, ուր կրում էին գարին, մի խոզ կար կապած, որին գիրացնում էին: Դարին նրանից անպակաս էր, որպեսզի ուտի և գիրանա: Քուռակն ասաց մորը.

— Ինչո՞ւ համար այն խոզը առանց աշխատանքի ուտում է գարին, որ մենք կրում ենք մեծ դժվարությամբ, իսկ մեզ, որ չարչարվում ենք, օրը մի անգամ են գարի տալիս: Մայրն ասաց.


— Լսիր, որդյակ, մի շաբաթ ևս համբերիր, ես քեզ պատասխան կտամ ու քո աչքով կտեսնես:

Մի շաբաթ հետո էջը և քուռակը բեռով տուն էին գալիս: Քուռակը մորից առաջ էր գնում և լսեց ուժեղ խոնչոցի ձայն, որովհետև խողը մորթում էին: Քուռակը խրտնեց և ետ փախավ դեպի մայրը: Մայրն ասաց.

— Ի՞նչ եղավ քեզ, որդյակ, որ սոսկում ես. մի վախենար խողից, որովհետև նրանից գարու հաշիվն են ուզում:

Դարձյալ եկան կալը՝ գարի կրելու: Եվ երբ բարձված վերադարձան տուն, քուռակը բարձրացնելով ոտքի սմբակը, մորն ասաց.

— Ո՛վ մայր, տես թե ոտքիս չի՞ փակչել գարու մի հատ, որ ինձնից էլ հաշիվ ուզեն, ինչպես խողից:





## ԱՅՐԻ ԿԻՆԸ ԵՎ ԻՐ ՈՐԴԻՆ


**Մ**ի այրի կին ուներ տաս այծ և մի որդի: Ամեն օր որդին այծերը տանում էր արոտ, և մայրն ամեն օր մի շերեփ ջուր էր լցնում կաթի մեջ ու փոխ էր տալիս հարևաններին: Եվ որդին մորն ասաց, թե ինչո՞ւ ես այդպես ջուր լցնում կաթի մեջ ու փոխ տալիս հարևաններին: Մայրն ասաց.


— Որդի, մեր կաթը քիչ է, նրա համար եմ անում, որ մեր կաթը մի քիչ ավելի լինի, որ ձմեռը մեզ թացան լինի:

Իսկ մի օր, երբ որդին այծերն արոտ էր տարել, երկնքում ծնվեց մի փոքր ամպ, անձրև եկավ, հեղեղ եղավ և այծերը սրբեց լցրեց գետը: Որդին տուն եկավ արևով ու դատարկ, ձեռքին միայն փայտը: Մայրն ասաց.

— Որդի, ո՛ւր ե՛ն այծերը, և ինչո՞ւ դու այսօր արևով եկար: Որդին ասաց.

— Մայրիկ, այն մի շերեփ ջուրը, որ խառնում էիր կաթին ու փոխ տալիս հարևաններին, հավաքվեց, հեղեղ դարձավ ու եկավ մեր այծերը տարավ, լցրեց գետը:





## ՄԻԱՅՆԱԿՅԱՑՆ ՈՒ ԳԱՄՓՈՒ ՇՈՒՆԸ

**Մ**ի միայնակյաց բնակվում էր մի գյուղի մոտ: Նա սիրեց մի աղջիկ և երկար ժամանակ նրա հետ շնանում էր պոռնը կուլթյամբ: Գյուղի տանուտերը ունեւր մի գամփու շուն, որ խիստ պահող շուն էր և ամբողջ գյուղը պահում էր: Մի գիշեր միայնակյացն եկավ, որ շնանա այն կնոջ հետ: Գյուղի եզրին նրան հանգիպեց տանուտերի շունը և հարձակվեց նրա վրա, կծեց և արյունը ճապաղ արեց ու շատ

վերքեր հասցնելով ունեղելով՝ քշեց նրան: Միայնակյացը լալով և արյունաթաթախ մտավ խուցը, դուռը փակեց, զղջաց ու չոքեց աղոթքի: Լաց եղավ և կուրծքը ծեծելով ասաց.

— Ասաված, բազում ժամանակ է, որ շնացա ու չվախեցա քո դատաստանից և ոչ էլ դառն դժոխքից զարհուրեցի, բայց այս դիշեր զարհուրեցի մի գամփո շնից և չկարողացա շնություն անել:





## ԱՅԾԵՐ ԵՎ ԳԱՅԼԵՐ

**Հ Ա Վ Ա Ք Վ Ե Ց Ի Ն** այծերը միասին և պատգամ ուղարկեցին գայլերի ազգին ու ասացին, թե ինչու մեր մեջ լինի անհաշտ խռովութիւն և ոչ թե խաղաղութիւն: Հավաքվեցին գայլերը և շատ ուրախացան, համակով պատգամ ուղարկեցին այծերի ազգին, նաև անթիվ ընծաներ: Եվ գրեցին այծերին.

«Լսեցինք ձեր բարի խորհուրդը և գոհ

ենք աստծուց, որովհետև մեզ համար մեծ խնդություն է և խաղաղություն. նաև իմացնում ենք ձերդ իմաստության, որ հովիվն ու շներն են պատճառ և սկիզբ մեր խռովության և կովի: Եվ եթե նրանց վերացնենք մեջտեղից, շուտով խաղաղություն կլինի»:

Հսեցին այծերը, հաստատեցին և ասացին.


— Իրավացի են գայլերը, որ մեզ սպանում են, որովհետև շները և հովիվը նրանց հալածում են մեզնից:


Եվ այծերը վտարեցին շներին ու հովիին և երդվեցին, որ հարյուր տարի մնան անխախտելի սիրով: Այծերը ցրվեցին լեռներն ու դաշտերը և սկսեցին ուրախ լինել, ցնծալ ու խաղալ, որովհետև արածում էին լավ արոտներում, ուտում էին համեղ խոտեր, խմում էին պաղ ջրեր, խնդում էին



ու վազվզում, փառք տալով, որ հասուն լավ  
ժամանակի:

Գայլերը համբերեցին հարյուր օր, ապա  
հավաքվեցին դաս-դաս, ընկան այծերի վրա  
և կերան:





## ԵՐԿՈՒ ՆԿԱՐԻՉ

**Մ**թազավոր շինեց գեղեցիկ դար-  
բաս և կամեցավ զարդարել այնպիսի նկար-  
ներով, որոնց նմանը ոչ մի տեղ չէր եղել։  
Ընտրեց երկու նկարիչներին, մեկին տվեց մի  
պատը, մյուսին՝ մյուս պատը և նրանց  
միջև վարագույր քաշեց։ Երբ նկարիչներն  
ավարտեցին իրենց գործը, թազավորը ե-  
կավ ու տեսավ, որ մեկը նկարել էր գե-  
ղեցիկ պատկեր և շատ հավանեց։ Իսկ  
մյուսը ոչինչ չէր նկարել, նա պատը շատ

գեղեցիկ սարքել ու կոկել էր հայելուց  
ավելի լավ: Երբ թագավորը տեսավ, որ չի  
նկարել, այլ միայն կոկել է, զարմացավ  
և ասաց.

— Դու ի՞նչ ես արել:

Նա ասաց.

— Ես ցույց կտամ իմ գործը:

Եվ ապա վեր քաշեց միջի վարագույրը:  
Երբ լույսը ծագեց ու լուսավորեց կոկած  
պատը, այն ժամանակ մթնեց նկարագարդ  
պատը, որովհետև հայելու մեջ երևում էին  
այն բոլոր նկարները, որ նկարված էին  
մյուս պատի վրա: Եվ թագավորն ասաց.

— Այս մյուսից գեղեցիկ է:






## ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ԱՂՎԵՍՐ

**Մ**ի առյուծ կորյունն ծնեց: Հավաքվեցին կենդանիները կորյունին տեսնելու և ուրախանալու: Աղվեսը եկավ և հանդեսի ժամանակ, բազմության մեջ, առյուծին նախատեց բարձրաձայն ու անարգեց, թե անյդ է քո զորությունը, որ ծնում ես միայն մի կորյուն և ոչ բազմաթիվ:

Առյուծը հանդարտաբար պատասխանեց.

— Այո՛, ես ծնում եմ՝մի կորյուն, բայց  
առյուծ եմ ծնում և ոչ քեզ նման աղ-  
վես:





## ԻՄԱՍՏՈՒՆ ԴԱՏԱՎՈՐԸ

**Մ**ի մարդ ուներ չար կին: Մի անգամ կինը կռվեց նրա հետ ու ասաց.

— Կարծում ես թե քո երեք որդիները քեզնից են: Մեկն է քեզնից, իսկ երկուսը բիճ են: Նա հարցրեց, թե ո՞րն է իմը, և կինը չասաց: Երբ հայրը մեռնում էր, ասաց.


— Իմ ամբողջ կայքը թող լինի իմ հարազատ որդուն:

Եղբայրները կռվում էին իրար հետ.

մեկն ասում էր, թե ես եմ հարազատ  
որդին, մյուսը՝ թե ես եմ: Գնացին մի  
իմաստուն դատավորի մոտ: Դատավորը  
հրամայեց նրանց հորը հանել գերեզմանից  
և նետ արձակել նրա վրա: Ով հորը զար-  
կեր նետով և նետը ծակեր հոր մարմինը,  
նա էր հարազատ որդին: Եվ երկու որդի-  
ները զարկեցին հորը, իսկ ճշմարիտ որ-  
դին դանակը քաշեց, որ սպանի եղբայր-  
ներին, լաց եղավ դուռն արցունքներով և  
թաղեց հոր մարմինը:

Իմացան, որ նա էր հարազատ որդին և  
նրան տվին հայրենի կայքը:





## ԱՌՅՈՒԾԸ, ԳԱՅԼԸ ԵՎ ԱՂՎԵՍԸ

**Ա**ՌՅՈՒԾԸ, գայլը և աղվեսը եղբայրացան ու որսի ելան: Գտան մի խոյ, մի մաքի և մի դառ: Ճաշի ժամին առյուծն ասաց գայլին, թե բաժանիր մեր մեջ այդ որսը: Գայլն ասաց.

-- Ո՛վ թագավոր, աստված արդեն բաժանել է. խոյը քեզ, մաքին ինձ և գառն աղվեսին: Առյուծը բարկանալով ապտակ զարկեց գայլի ծնոտին: Գայլի աչքերը դուրս թռան, և նա նստեց ու դառն լաց



եղավ: Առյուծն ասաց աղվեսին, թե բա-  
ժանիր ոչխարները մեր մեջ: Աղվեսն ասաց.

— Ո՛վ թագավոր, աստված արդեն բա-  
ժանել է. խոյը քեզ՝ ճաշին, մաքին քեզ՝  
հրամենքին, գառը քեզ՝ ընթրիքին:

Եվ առյուծն ասաց.

— Ո՛վ խորամանկ աղվես, քեզ ո՞վ սո-  
վորեցրեց այդպես ճիշտ բաժանել:

Աղվեսն ասաց.

— Ինձ սովորեցրին գայլի աչքերը, որ  
դուրս թռան:





## Գ Ի Ն Ի

**Մ**ի թագավոր մի որդի ուներ: Նա հրամայեց նայիպներին, թե ամեն օր ձեզնից մեկը թող տանի իմ որդուն և պատվի: Եվ տանում էին:

Մի օր մի նայիպ պատվելու էր տարել թագավորի որդուն: Երեկոյան նրան տարավ թագավորի տունը և ինքը գընաց:

Թագավորի որդին խիստ գինով էր: Նա

հարբած դուրս եկավ ընկավ աղբանոցը և մեռավ:

Թագավորը հրամայեց, թե իմ իշխանության ներքո ինչքան այգի կա՝ փակեք և կարասները կոտրատեք: Այդպես արին:

Մի այրի կին մի որդի ուներ: Նա պահեց իր հնձանն ու զինին: Ամեն առավոտ ու երեկո հացի վրա երկու թաս գինի էր տալիս որդուն:

Այրի կնոջ որդին մի գիշեր դուրս եկավ, սպանեց թագավորի առյուծին: Թագավորն առավոտյան հրամայեց՝ եթե իմ առյուծին սպանողը գա և ինձ պատմի՝ նրան չեմ պատժի:

Եկան այրի կինը և նրա որդին:

Թագավորը նրան հարցրեց, թե ինչպես սպանեցիր առյուծին: Նա ասաց, թե գի-

շերով դուրս եկա, հանդիպեցի առյուծին  
և սպանեցի: Մայրն ասաց, թե նրան գի-  
նով է սնուցել և պատմեց, թե ինչպես է  
գինով սնուցել:

Թագավորը հրաման արձակեց, թե այգի  
տնկեք և գինին այնպես խմեք, որ առյուծ  
սպանեք, ոչ թե աղբանոցում մեռնեք:





## ՄԻԱՄԻՏ ԳՈՂԵՐԸ

**Ն**ԵՐԿՈՒ գող բարձրացան մի մեծատան կտուր և կամեցան երգիկով վայր իջնել ու գողություն անել: Մեծատունն իմացավ, որ գողերը երգիկի մոտ են: Կինը մարդուն ասաց, թե այս բոլոր գանձերը, ոսկին և կերպասը քեզ սրտեղից: Մեծատունն ասաց.

— Գնում էի գողության, մեծատուն մարդկանց երգիկով իջնում էի լուսնկա գիշերով, ինչպես այժմ, լուսնի շողերը եր-

գիկից ներս էին ընկնում, ինչպես այժմ:  
Նա գրկում էի շողերի սյունը, վայր էի  
իջնում և այնպիսի մի բան էի ասում, որ  
ինչքան գեղեցիկ կերպաս կար այդ տանը,  
երևում էր ինձ: Կապում էի լուսնի շո-  
ղերին և վեր բարձրանում: Այս ամենն  
այդպես եմ վաստակել:

Նրբ գողերն այդ բանը լսեցին, խիստ  
ուրախացան և հավատացին այս ցնորամիտ  
բանին ու լուսնի շողերը գրկելով երգիկից  
վայր ընկան ու ջարդվեցին:





## ԻՇԽԱՆԸ ԵՎ ԱՅՐԻ ԿԻՆԸ ✓

**Մ** Ի իշխան կար խիստ չար և անիրավ: Նույն քաղաքում ապրում էր նաև մի այրի կին: Իշխանը հարկ պահանջելով նեղում էր նրան, իսկ այրի կինը աղոթում էր, որ իշխանը երկար ու խաղաղ կյանք ունենա: Գնացին ասացին իշխանին, թե քո չարության համար այրին աղոթում է: Իշխանը եկավ և սոսց.

— Ես քեզ բարիք չեմ արել, ո՞վ կին, դու ինձ համար ինչո՞ւ ես աղոթում:

Այրի կինն ասաց.

— Քո հայրը վատ մարդ էր. ես անի-  
ծեցի, և նա մեռավ: Դու նստեցիր նրա  
տեղը՝ ավելի խիստ չար: Այժմ վախենում  
եմ, որ մեռնես և քո որդին քեզնից ավելի  
չար լինի:









## ԻՄԱՍՏՈՒՆ ՁԻՆՎՈՐԸ

**Մ**Ի իմաստուն զինվոր պատերազմ էր գնում. նա երկու ոտքով կաղ էր: Ձինվորներինց մեկը նրան ասաց. «Ո՛վ ողորմելի, ո՞ւր ես գնում: Քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող:» Իսկ նա ասաց. «Ո՛վ անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելու»:





## ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՕՋՐ

**Է**ՄԻ մի Թագավոր և ունեւր մի սիրելի  
օձ, որն ամեն օր նրան բերում էր մի կար-  
միր գահեկան: Թագավորն ունեցավ մի  
մանուկ, որին սնուցում էր գահի վրա: Նա  
օձը նետում էր մանկան պարանոցով, և  
օձն ու մանուկը այգպես խաղում էին:  
Երբ մանուկը մեծացավ, մի անգամ խաղի  
ժամանակ սուրը հանեց, կտրեց օձի պոչը  
և գետին գցեց: Օձը զայրացավ, խայթեց

մանուկին, և մանուկն իսկույն մեռավ: Օձը գնաց օտար երկիր: Երբ թագավորը եկավ ու տեսավ մանուկին օձի թույնից սևացած ու մեռած, օձի պոչը գետնին ընկած, իմացավ, որ իր մանուկն է թրով կտրել օձի պոչը: Նա սգաց որդուն, տարավ թաղեց գերեզմանում:

Անցավ մի առ ժամանակ, և թագավորը խնդրարկուներ ուղարկեց այն օձի մոտ և ասաց.


— Գիտեմ, որ առաջ իմ որդին է ծռություն արել. նա կտրել է քո պոչը, ապա դու կծել ես նրան: Ինչ որ եղավ՝ եղավ, և իզուր գնացիր: Արի, և մենք առաջվա նման կսիրենք իրար ու միասին կապրենք:

Իսկ օձը պատասխան տվեց և ասաց.

— Այդպես չէ. քանի որ ես պիտի նայեմ իմ պոչի վրա, իսկ դու քո որդու գե-

ըեզմանին, ուրեմն մեր միջից թշնամու-  
թյունը չի վերանա: Լափն այն է, որ դու  
և ես իրարից հեռանանք, որպեսզի ուրիշ  
մեծ չարիքներ չծնվեն մեր մեջ:





## ԱՌՅՈՒԾԸ, ԱՂՎԵՍՆ ՈՒ ԱՐՋԸ

**Ա**ՌՅՈՒԾԸ հիվանդացավ, և բոլոր կենդանիները եկան նրան տեսության. միայն աղվեսն ուշացավ: Արջը չարախոսեց նրան, իսկ աղվեսը դռան ետևից լսեց և ներս ընկնելով, թավալվեց առյուծի առաջ: Առյուծն ասաց աղվեսին. «Բարի ժամի չեկար, գարշելի՛, ասա ինձ, ինչո՞ւ ուշացար»:

Աղվեսն ասաց. «Մի բարկանար, բարի թագավոր, երգվում եմ քո գլխով, որ քո առողջության համար այցելեցի շատ բժըշ-

կապետներին և մեծ շարձարանք քաշեցի, բայց իմացա դեղը քո բժշկութեան»։ Եվ առյուծն ասաց. «Բարի եկար, իմաստուն կենդանի, ի՞նչն է այդ դեղը»։

Աղվեսն ասաց. «Խիստ պիտանի է և դյուր-րին. բժշկապետներն ասացին, թե կենդա-նի հանեք արջի մորթին և տաք-տաք գցեք առյուծի վրա, մորթին իսկույն ցավը կըհա-նի հիվանդից»։ Առյուծը հրամայեց, բռնե-ցին արջին և սկսեցին մորթին հանել։ Իսկ նա վաշտում էր և ուժեղ ոռնոց արձակում։

Աղվեսն ասաց. «Այդ ամենը քեզ և նրան, ով արքունիք մտնելով կշարախոսի մեկին»։





ՄԻ ԿԱԹ՝ ՄԵՂՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ  
ՊԱՏՃԱՌ

Մ Թ մարդ խանութ ուներ և մեղր էր ծախում: Մեղրից մի կաթ կաթեց գետնին և մի պիծակ նստեց կաթի վրա: Կատուն վազեց և պիծակին առավ: Նրանից հետո շունը վազեց և կատվին առավ: Ոսնութի տերը շանը զարկեց և սպանեց:

Այդ գյուղին դրացի մի գյուղ կար, և շունն այն գյուղից էր: Երբ շան տերն իմացավ, թե խանութպանն սպանել է իր

շանը, այն ժամանակ եկավ և սպանեց խա-  
նութպանին: Հետո երկու կողմից վեր կա-  
ցան գյուղացիք և միմյանց հետ մեծ պա-  
տերազմ արին: Նրանց մեջ կոտորած եղավ,  
և երկու կողմից կենդանի մնաց մի մարդ՝  
մի կաթ մեղրի համար:







## ԿՏԱԿ ԳԱՆՁԻ ՄԱՍԻՆ

**Մ**Ի իմաստուն և աղքատ մարդ ուներ ծույլ որդիներ: Մահվան ժամին նա կանչեց որդիներին և ասաց.

— Ո՛վ զավակներ, իմ նախնիները շատ գանձ են թողել մեր այգոււմ, բայց ես ձեզ ցույց չեմ տա նրա տեղը: Այդ գանձը կգտնի նա, ով շատ աշխատի և խոր փորի:

Հոր մահից հետո որդիներն սկսեցին աշխատել մեծ եռանդով և խորն էին փո-

ըուճ, որովհետև յուրաքանչյուրն աշխատում էր, որ ինքը գտնի գանձը:

Այգիին սկսեց աճել ու զորանալ, առատ բերք տվեց և նրանց հարստացրեց գանձերով:





## ՈՒՂՏԸ, ԳԱՅԼՆ ՈՒ ԱՂՎԵՍՐ

**ՈՒՂՏԸ**, գայլն ու աղվեսը եղբայրացան և ճանապարհ ընկան: Ճանապարհին գտան մի բլիթ հաց և միմյանց ասացին, թե ով ավագ է, թող նա ուտի: Եվ սկսեցին ասել իրենց տարիքը: Աղվեսն ասաց.

— Ես այն աղվեսն եմ, որի անունը Ադամը դրեց:

Գայլն ասաց.

— Ես այն գայլն եմ, որին Նոյը տապանն առավ:

Ուղտը տեսնելով, որ նրանք իրենից  
ավագ դուրս եկան և հացը պիտի ուտեն,  
հացը բերանն առավ և բարձրացնելով ա-  
սաց.

— Մի՞թե ես երեկվա տղան եմ, որ այս-  
չափ մեծացրել եմ իմ սրունքները:

Նվ սկսեց հացն ուտել: Իսկ աղվեսը և  
գայլը ցատկելով նրա շուրջը, ոչինչ չկա-  
րողացան անել և փախան:





ԹՌՁՈՒՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐ ԿՌՈՒՆԿԸ,  
ԵՎ ԷՇԸ



**Հ** ԱՎԱՔՎԵՑԻՆ թռչունները և ասացին, թե ում ձայնը զորավոր է, նրան մեզ թագավոր դնենք, որպեսզի պատերազմի ժամին կանչի մեզ:

Կռուկներ երկինք բարձրացավ և գոչեց. նրան հավանեցին թռչունները և օժեցին թագավոր:

Էշը եկավ և ասաց.

— Ա՛յ, եթե ինձ տաի տեղ անեիք, որ  
նրա փոխարեն ես բարձրանայի, դուք կը-  
լսեիք, թե ում ձայնն է զորավոր:





## ԵԶԸ ԵՎ ՉԻՆ

**Ե**ՉԸ և ձին խոսեցին իրար հետ: Եզն  
ասաց.

-- Դու ո՞վ ես, կամ ի՞նչի պետք ես:


Չին ասաց.

— Ես ձին եմ, ինձ թագավորները, իշ-  
խանները և պարոնները զարդարում են  
ոսկով և արծաթով ու բազմում են ինձ վրա:


Եզն ասաց.

— Ամբողջ աշխարհի բարեկեցությունն  
եմ ես, սրովհետև ես եմ վաստակում, չար-

չարվում և հոգնում, իսկ դու և քո թագավորն ուտում եք: Բոլոր մարդիկ ուտում են իմ վաստակը. եթե չվաստակեմ, դու և քո թագավորն իսկույն կմեռնեք: Եվ դու երախտամոռ մի լինիր:







## ՀԻՄԱՐԸ ԵՎ ՁՄԵՐՈՒԿԸ


**Մ**ի հիմար և միամիտ մարդ ունենր մի դահեկան: Առնելով դահեկանը նա դնաց քաղաք մի էշ գնելու: Շրջեց քաղաքում և շուկայում, մի դահեկանի էշ չգտավ, նորից եկավ շուկա, տեսավ մի մեծ ձմերուկ և հիացած հարցրեց.

— Այս ի՞նչ է:

Վաճառականներն իմացան, որ նա հիմար է և ասացին, թե հնդու էշի ձու է և կհանի հնդու մեծ էշ: Մարդը ուրախանա-

լով ավեց դահեկանը և առավ հնդու էշի  
ձուն: Վաճառականները նրան պատվիրե-  
ցին, թե ձեռքիդ զգուշ տար, թե չե  
կկոտրվի և էշը միջից կփախչի: Մարդը  
ձմերուկը ձեռքին սկսեց գնալ գառի-  
վայր ճանապարհով, ոտքը սայթաքեց,  
ձմերուկը ձեռքից դուրս պրծավ և գլոր-  
վեց խիտ անտառի մեջ: Անտառից մի նա-  
պաստակ վազեց և սկսեց փախչել, իսկ  
մարդը կարծեց, թե ձուն կոտրվել է և ահա  
էշը դուրս է եկել ու փախչում է: Նա  
ետևից վազելով կանչում էր նապաստակին  
ու ձայն սալիս:

— Այ հնդու էշ, վա՛յ ինձ, մի փախչիր.  
քուռի, քուռի, խնայիր ինձ և վերադար-  
ձիր:





## ԷՇԻՆ ԹՈՒ ԾՆՎԵՑ


✓

**Է**ՇԻՆ ավետիս ավին՝ թե ցնծա, ուրախ եղիր ու մեծ ընծա պարգևիր, որովհետև քեզ թոռ ծնվեց:

Եվ էշն ասաց.

Վայ ինձ, բարեկամներ. եթե հարյուր թոռ էլ ծնվի, իմ մեջքի բեռան ծանրությունը չեն թեթևացնի:





## ԱՂՔԱՏՆ ՈՒ ԱՎԵՏԱՐԱՆՐ

**Մ**ի աղքատ գյուղ եկավ ու մտավ գյուղի եկեղեցին, որ խարխուլ էր և անձրևի ժամանակ կաթում էր: Աղքատը անձրևից թրջվել էր: Նա քաղցած էր, հագել էր պատառոտուն զգեստ, դողում էր, հոգնել էր ճանապարհից: Ներս մտավ քահանան, սկսեց ժամ ասել: Առավ ավետարանը և կարդաց այն էջը, ուր գրված էր, թե օտարական էի՝ ընդունեցիք ինձ, մերկ էի՝ հագցրիք ինձ, քաղցած էի՝ կերակրեցիք

ինձ, ծարավ էի՝ հագեցրիք ինձ: Աղքատը լսեց և ուրախացավ. «Այս ինձ համար է ասված, շուտով կկատարեն իմ կամքը»: Քահանան ժամն արձակեց ու գնաց տուն, աղքատին թողեց եկեղեցու մեջ և հոգ չտարավ նրա մասին: Աղքատը մտածեց. «Այն գիրը, որ կարդաց, սուտ էր»: Առավ ավետարանը, վրան քար դրեց և սուզեց ջրի մեջ: Քահանան եկեղեցի գալով, ավետարանը չգտավ և աղքատին ասաց.

— Ո՛ւր է ավետարանը:

Աղքատն ասաց քահանային.


— Ի՞նչ ես անում սուտ ավետարանը, ես տարա ջուրը գցեցի:

Քահանան բարկանալով սկսեց ծեծել աղքատին: Աղքատն ասաց.

— Ինչո՞ւ ես ծեծում ինձ, անիրավ. եթե հավատում ես, թե ավետարանն աստծու ճշմարիտ խոսքն է, ապա ինչո՞ւ չես կատարում նրա կամքը: Որովհետև ես օտարական եմ, և ինձ չեք ընդունում, մերկ

եմ, և ինձ չեք հապցնում, քաղցած եմ՝  
չեք կերակրում, ծարավ եմ ջուր չեք տա-  
լիս: Մի՞թե աստված այդ բաների պակա-  
սությունն ուներ և այդ ամենն իր համար  
ասաց:







## ՀԱՅՐՆ ՈՒ ՈՐԴԻՆ ✓

**Մ**ի մարդ աղջիկ ուզեց որդու համար, և որդին ամուսնացավ աղջկա հետ: Երբ միավորվեց նրա հետ, շատ հիացավ ամուսնուժյան համար, ուրախացավ և սկսեց հորը խրատել ամուսնուժյան առթիվ:

Հայրն ասաց. «Ո՛վ որդյակ, ես ամուսնուժյամբ ծնեցի քեզ, և այժմ դ՞ո՞ւ ես խրատում ինձ»:





## ՄԱՐԴԸ, ԸՆԿՈՒՅՁԸ ԵՎ ՁՄԵՐՈՒԿԸ

**Մ** Ի մարդ ընկույզի ծառի տակ ձմե-  
րուկ էր ցանել: Պտուղի ժամանակ եկավ,  
տեսավ մեծ-մեծ ձմերուկները, նայեց ծա-  
ռին, տեսավ, որ ընկույզը մանր էր: Մարդն  
ասաց.

— Տեր աստված, ինչ որ ստեղծել ես՝  
ամենը կարգին է և մի բանի նման: Իսկ  
այս երկու պտուղը անկարգ են և բանի  
նման չեն:


Մարդն ասում էր, որ ընկույզի տեղ



ձմերուկ պիտի լիներ ծառին և ընկույզը  
ձմերուկի թփի վրա: Նա պառկեց ծառի  
տակ, նայեց ծառին: Հանկարծ մի ընկույզ  
պոկվեց ծառից, ընկավ նրա ճակատին,  
ճակատը պատռեց և արյուն ելավ: Մարդը  
վեր կացավ տեղից և աղաղակեց.

— Տեր աստված, ինչ որ ստեղծել ես,  
ամենը կարգին է ու կահարյալ և ով չհա-  
վանի քո ստեղծածը, նրա ճակատը թող  
իմից վատ լինի, որովհետև եթե ընկույզի  
տեղ ձմերուկ լիներ, ինձ պիտի սպաներ:





✓ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՋՐԱՂԱՅՔ

**Ե**ԿԵՂԵՑԻՆ ԻՎԱՐԾԵԿՅԱՎ ԻՐ ԱՐՔՈՒ-  
թԵՅԱՄԲ և ասաց.

— Ես աստծու տաճարն եմ. քահանա-  
ներն ու ժողովուրդը դեպի ինձ են գալիս  
աստծուն աղոթելու և պատարագ մատու-  
ցելու: Աստված հաշտվում է աշխարհի հետ  
և մեղքերին թողություն է լինում:

Այն ժամանակ ջրաղացն ասաց եկեղե-  
ցուն:

— Ինչ որ դու ասում ես, արդար է և

ճշմարիտ, բայց դու իմ երախտիքը մի  
մոռանա, որ գիշեր-ցերեկ աշխատում եմ  
և դատում ան, ինչ որ ուտում են քահա-  
նաներն ու ժողովուրդը, և ապա քեզ են  
զալիս աղոթելու և երկրպագելու աստծուն:





## ԱՄԵՆԱՏԳԵՏ ՄԱՐԴԸ

**Մ**ի թագավոր կամեցավ աշտարակ շինել: Աշտարակը քանի ցերեկը շինում էին, գիշերը փուլ էր գալիս: Նա հավաքեց իր գիտուններին ու պատճառը հարցրեց: Նրանք ասացին.

— Եթե կամենում ես, որ այլևս չփլչի, գտիր մի տգետ մարդ, որից ավելի տգետ մարդ չլինի, և նրան կենդանի դիր պատի մեջ, ու պատը թող շարեն. այլևս չի փլչի.

Թագավորն ասաց.

— Այդ քանի ընտրութիւնը ևս դուք արեք. գտեք մի տգետ մարդ, որին կենդանի թաղեն պատի մեջ:

Գիտունները նստեցին միասին որոշելու, թե որտեղ կարող են գտնել տգետ մարդ: Մեկն ասաց.

Չկնորսն է տգետ, քանի որ նրա առն ու տալը մարդու հետ չի, այլ ջրի և ձկների:

Իսկ ոմանք ասացին.

— Իշապանը, որ էջի հետ է լինում և իր ողջ կյանքն անց է կացնում գրաստի հետ, շրջելով լեռ ու անտառ:

Ոմանք ծովարարին ասացին, իսկ ոմանք հովվին, որ ամառ-ձմեռ ոչխարների հետ շրջում է լեռներում, չի մտնում գյուղ կամ քաղաք: Հավանութիւն տվին և կամեցան հովվին բերել:

Այն ժամանակ գիտուններից մեկն ասաց.

— Մեր թագավորը մի հովիվ ունի, որ ծնվել է սարում ոչխարների մեջ, սնվել է

այնտեղ և իր կյանքում ոչ գյուղ է մտել, ոչ քաղաք:

Ուղարկեցին տասը ձիավոր, որպեսզի մարդուն բերեն: Ձիավորները գնացին գտան հովվին, որ կթում էր ոչխարը, և ողջունելով ասացին.

— Թագավորը քեզ կանչում է:  
Հովիֆն ասաց.

— Ես իմ կյանքում ոչ քաղաք եմ գնացել և ոչ գյուղ. ինձ ինչո՞ւ է կանչում:

Իսկ նրանք խորամանկուժյամբ ասացին. «Ձենք իմանում»: Հովիվը պատվեց նրանց, գառ մորթեց, պանիր բերեց, ուրախացրեց նրանց և ելլմամբ հարցրեց կանչելու պատճառը: Նրանք ասացին, թե այս պատճառով է քեզ կանչում, որովհետև թագավորի գիտուններն ասել են, որ մի տգետ մարդու պետք է գնել պատի մեջ, որպեսզի պատը շեն մնա:

Այն ժամանակ հովիվը ծիծաղեց և ասաց.

— Հիմարը և տգետն այն գիտուններն

են, որ այդպիսի ընտրութիւնն են արել:  
Նա մի ոչխար բերելով ասաց.

— Ես ձեզ ցույց կտամ իմ տգիտու-  
թիւնը:

Եվ ասաց.

— Այս ոչխարը երկու գառ ունի փորում,  
մինը էգ է, մյուսը՝ որձ. մեկի գլուխը սև  
է, մյուսինը՝ սպիտակ:

Ոչխարը մորթեց ու գառները փորից  
հանեց. այնպես էր, ինչպես ասաց:

Մի այլ ոչխար բերելով, ասաց.

— Այս ոչխարը մեկ գառ ունի փորում.  
մարմինը սև է, գլուխն սպիտակ, ինքը որձ:

Մորթեցին, տեսան այնպես է: Հովիվն  
ասաց.

— Ոչխարի այս երկու հոտը, որ կա ձեր  
առաջ, ամեն մեկին գիտեմ, թե որն է  
ծնելու, որն է ստերջ, որն է որձ ծնելու,  
որը էգ, որը սև կամ սպիտակ և որը սև ու  
սպիտակ պուտերով: Ձեր գիտունները կա-  
րող են այդ իմանալ:

Ձիավորներն ասացին.

— Ո՛չ ամենևին:

Հովիվն ասաց.

-- Ուրեմն իմացեք, որ ես չեմ այն հիմարը և տգետը, որին դուք փնտրում եք: Իսկ եթե կամենաք, ես ցույց կտամ տգետ մարդուն: Թագավորը թող իր նայիպին բռնի, թալանի և ինչ ունի՝ բոլորն առնի ու քաղաքի հրապարակում նրան կախի, չարաչար տանջի, որպեսզի բոլոր քաղաքացիները տեսնեն. ապա նայիպին թող տանեն թաքցնեն և ասեն, թե նրան սպանեցին: Երեք ուր քաղաքում թող կանչեն, թե ինչ մարդ որ գա և հանձն առնի նայիպի գործը, նրա բոլոր ապրանքն այդ մարդուն կտանք և նրան կնշանակենք թագավորի նայիպ: Ա՛յն մարդը, որ կտեսնի այդ խաղքը, կլսի, ինչ որ արին նայիպի գլխին և առաջանալով կասի, թե ես ուզում եմ լինել նայիպ, այդ մարդը և՛ հիմար է, և՛ տգետ, նրան բռնեցեք և կեն-




դանի դրեք պատի մեջ, որպեսզի այլևս  
պատը չփլչի և շեն մնա:

Նրանք եկան և թագավորին պատմեցին:  
Թագավորն արեց այնպես, ինչպես հովիփն  
ասել էր: Մինչդեռ քաղաքում կանչում  
էին, թե ով գա և հանձն առնի նայիպի  
գործն ու իշխանութունը, նա կստանա  
նրա ապրանքն ու հողը, մոտ վաղեց մի  
անճարակ ու տխմար մարդ և ասաց, թե  
ես հանձն կառնեմ այդ գործը: Նրան հարց-  
րին, թե տեսա՞ր ինչ արին նայիպի գլխին:  
Նա ասաց.

— Այո, տեսա:

Իսկույն առան նրան ու տարան, կեն-  
դանի դրին պատի մեջ, և պատը հաստա-  
տուն մնաց:





## ԱՂՎԵՍՆ ՈՒ ՈՐՍՈՐԴԸ

**Ո**ՐՍՈՐԴԸ շներով հետապնդում ու  
նեղում էր աղվեսին:

Աղվեսը դարձավ և ասաց.

— Աղաչում եմ քեզ, ասա, թե ինչո՞ւ  
համար ես ինձ նեղում:

Որսորդն ասաց.

— Որպեսզի հանեմ քո մորթին:

Աղվեսը կանգնեց և ասաց.

— Տեր աստված, փառք քեզ, որ սրա  
ուզածն այս է: Իսկ ես կարծում էի, թե  
ինձ ուզում է նշանակել մեր գավառի հա-  
վարած կամ թռչնոցի վանահայր:





## ԻՇԽԱՆԱՎՈՐԸ ԵՎ ԻՄԱՍՏՈՒՆԸ

**ԿԱՐ** մի աշխարհակալ իշխանավոր։  
Նա ուներ մի շատ գեղեցիկ տղա։ Իշխա-  
նավորն ասաց, թե գեղեցիկ աղջիկ կառ-  
նեմ, որ կին լինի իմ որդուն՝ իմ գահը  
ժառանգող գեղեցիկ թոռներ ունենամ։  
Գնաց բերեց մի գեղեցիկ հարս, և դեռ թոռ  
չէր ունեցել, երբ որդին մեռավ ու հարսը  
մնաց։ Նա ինքը կամեցավ հարսին առնել և  
հարցրեց իմաստուններին, թե կամ իրա-  
վունք։ Նրանք ասացին, թե իրավունք

չկա, որ հայրը հարսին առնի: Նա չկամե-  
ցավ լսել նրանց, գտավ մի այլ իմաստուն,  
որ նրա սիրելին էր, և այդ իմաստունն  
ասաց իշխանավորին.

— Աշխարհում յոթանասուներկու ազգ  
կա, և նրանցից ո՛չ մեկին չի հասնում, իսկ  
քեզ կհասնի:


Եվ իմաստունն ասաց.

— Վախենում եմ պատճառն ասել, որով-  
հետև կսպանես ինձ:

Նա երգվեց չպատժել նրան, եթե պատ-  
ճառն ասի:

Այն ժամանակ իմաստունն ասաց.

— Որովհետև դու ամեն ազգից դուրս  
ես. քեզ վրա իշխանություն չկա, ինչ կա-  
մենաս՝ կարող ես անել:



✓ ԱՂՎԵՍԸ ԵՎ ԹՂԹԱՏԱՐ ԳԱՅԼԸ

**ԱՂՎԵՍԸ** մի գրած թուղթ գտավ, տարավ գայլին ու ասաց.

— Այսքան ժամանակ աշխատեցի, բարեխոս մարդիկ մեջ գցեցի և իշխանից քեզ համար թուղթ հանեցի, մի ոչխար պիտի տա քեզ: Եվ ոչ շուն, ոչ մարդ քեզ չպիտի նեղեն:

Այդպես խաբեց գայլին և միտսին գնացին մի գյուղ: Աղվեսը նստեց բլուրի վրա և թուղթը տվեց գայլին: Երբ գայլը գյուղ

մտավ, վրա թափվեցին շներն ու մարդիկ  
և նրան գզեցին ու գանահարեցին: Արյու-  
նաթաթախ գայլը հազիվ ազատվելով հա-  
սավ աղվեսին: Աղվեսն ասաց.

— Ինչո՞ւ թուղթը ցույց չավիր:

Գայլն ասաց.


— Յույց տվի, բայց գյուղում հազար  
շուն կար, որ գիր չգիտեր:






## ✓ ԱՅՐԻ ԿԻՆՐ ԵՎ ԽՈՐԹ ՈՐԳԻՆ

**Մ**ի այրի կին ուներ մի կով, իսկ նրա խորթ որդին ուներ մի էշ: Խորթ որդին գողանում էր կովի կերը, տալիս էշին: Այրի կինն աստժողն աղաչեց, որ աստված էշին մեռցնի: Բայց կովը մեռավ, և այրին լաց եղավ ու ասաց. «Ո՛վ աստված, մի՞թե չկարողացար էշը կովից տարբերել»:







## ՀԱԼԱԼ ՄԱՐԴԸ

**Մ**երիտասարդ ուխտել էր հարամ բան ամենևին չուսել: Մի օր նա գնաց գետի ափը և տեսավ, որ ջուրը մի խնձոր է բերում: Երիտասարդն առավ խնձորը և կերավ անոթի: Ապա միտն ընկավ իր ուխտը, գնաց գետն ի վեր, գտավ մի այգի և իմացավ, որ խնձորն այդ այգուց էր: Երիտասարդն ասաց այգետիրոջը.

— Ողորմիր ինձ և առ խնձորի գինը կամ հալալ արա, որովհետև ես հարամ բան ամենևին չեմ կերել:

Բոււրաստանի տերն ասաց.

— Կեսը, որ իմն է, հալալ քեզ, իսկ կեսը իմ եղբորն է, նրան տեր չեմ: Իմ եղբայրը հեռու է այստեղից վեց օրվա ճանապարհ:

Երիտասարդը ճանապարհ ընկավ և գտավ այն մարդուն, ասաց.

— Կամ առ քեզ կես խնձորի գինը և կամ հալալ արա ինձ:

Մարդն ասաց.

— Ո՛չ գինը կառնեմ և ո՛չ հալալ կանեմ: Թե կուզես, որ հալալ անեմ, ես մի աղջիկ ունեմ, որ ո՛չ ականջ ունի, ո՛չ լեզու, ո՛չ ձեռք և ո՛չ ոտք. նրան քեզ կին առ, որ հալալ անեմ:

Երիտասարդն անճարացած առավ այդ աղջկան: Երբ առագաստ մտան, տեսավ որ աղջիկը բոլորովին առողջ էր: Երիտասարդն աներոջն ասաց, թե ինչո՞ւ էիր ծաղրում քո աղջկան: Եվ նա ասաց.

— Ես ճշմարիտ էի, որովհետև ծնված

օրից իմ աղջիկն արեգակի լույսը երգից է  
տեսել, օտար մարդու ձայն չի լսել, օտարի  
հետ չի խոսել, ձեռքով մեղք չի շոշափել  
և ոտքը դռնից դուրս չի դրել: Նա քեզ  
նման հալալ մարդ էի ուզում, և ահա դու  
եկար:





## ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՄԱՐԿԻՐ

**Մ** զորավոր առյուծ նստել էր ճանապարհին, և տեսակ-տեսակ գազաններ այդ ճանապարհով գալիս էին դողալով ու անցնում: Առյուծը հարցրեց նրանց.

— Ինչո՞ւ եք փախչում և ո՞ւմ ահից եք զարհուրած փախչում:

Նրանք ասացին.

— Փախիր և դու, որովհետև ահա գալիս է մարդը:

Առյուծն ասաց.

— Ո՞վ է մարդը, ի՞նչ է նա, ի՞նչ է նրա ուժը և նրա կերպարանքը, որ փախչում եք նրանից:

Նրանք ասացին.

— Կգա, կտեսնի շեզ և քեզ վնայ կլինի: Եվ ահա իր հանդից եկավ մի հողագործ մարդ: Առյուծն ասաց.

— Մի՞թե դու ես այն մարդը, որ փախցրնում է դազաններին:

Նա ասաց.

— Այո, ես եմ:

Առյուծն ասաց.

— Արի կովենք:

Մարդն ասաց.

— Այո, բայց քո զենքերը քեզ հետ են, իսկ իմը տանն են: Եկ նախ կապեմ քեզ, որպեսզի չփախչես, մինչև ես գնամ, առնեմ իմ զենքը, և ապա կովենք:

Առյուծն ասաց.

— Երդվիր որ կգաս, և ես կլսեմ քեդ: Մարդը երդվեց, և առյուծն ասաց.


— Հիմա կապիր ինձ և գնա շուտ ու  
դարձիր:

Մարդը հանեց պարանը և առյուծին պինդ  
կապով կապեց կաղնու ծառին, ծառից  
կտրեց մի բիր և սկսեց զարկել առյուծին:

Առյուծը գոչեց.

— Եթե դու մարդ ես, ավելի խիստ և  
անխնա զարկ իմ կողերին, որովհետև այս  
խելքին այդպես է վայել:





## ՄՈՒԿԸ ԵՎ ՈՒՂՏԸ

**Մ**ի մուկ հպարտացավ: Կորավ նրա իմաստութիւնը և նրա սիրտը լցվեց հըպարտութեամբ: Մուկը գնաց ուղտի մոտ և ասաց ուղտին.

— Ինձ հրաման տուր քո կճղակի մեջ բուն գնեմ և աշնտէղ բնակվեմ:

Ուղտն ասաց.

— Քեզ փնաս կլինի, որովհետև հանկարծ կսխ կսամ քեզ և կմեռնես:

Մուկն ասաց.

— Քո սմբակը կակուղ է և ինձ վնաս  
չի լինի:

Ուղտն ասաց.

— Քո արյունը քո գլուխը:

Եվ մուկն ուղտի կճղակի մեջ շինեց իր  
բունը: Մի անգամ ուղտը ծանր բեռան  
տակ քայլեց և հանկարծակի կոխ տվեց  
մուկին: Մուկը ճչաց և նրա փորից դուրս  
եկավ ճրագուն, որովհետև մուկը գեր էր:

Այդ տեսնելով ուղտն ասաց.

— Ահա եղբայր, հենց այդ էր նեղում.  
Քեզ, որ դուրս ելավ քո փորից:







## ԳԱՅԼԸ, ԱՂՎԵՄՆ ՈՒ ԶՈՐԻՆ

**Գ**ԱՅԼԸ, աղվեսն ու ջորին եղբայրացան ու գնացին: Երբ սովածացան և որսի չհանդիպեցին, ասացին.

— Եկեք ուտենք նրան, ով տարիքով փոքր է:

Այսպես ասացին գայլը և աղվեսը, որովհետև կամենում էին ջորուն ուտել: Գայլին հարցրին, թե ո՞ր տարվա գայլն ես, նա ասաց, թե ես այն գայլն եմ, որին նոյը տապանն առավ:

Աղվեսն առաջ եկավ և ասաց.

— Օ՛, դու տասը ազգով ինձանից փոքր ես. ես այն աղվեսն եմ, որին աստված ստեղծեց:

Ջորին եկավ և ասաց.

— Իմ ծննդյան թվականը գրված է սմբակիս վրա, եկեք կարդացեք և տեսեք՝ քանի տարեկան եմ:

Նա ոտքը բարձրացրեց: Աղվեսն ասաց գայլին.

— Գիտեմ, որ դու դպրոցում եղել ես, արի գիրը կարդա:

Գայլը հավատաց և գնաց կարդալու: Ջորին ասաց.


— Առաջ արի, որովհետև գիրս մանր է:

Նա առաջ գնաց, և ջորին սաստիկ ուժով զարկեց գայլի ճակատին ու ջախջախեց: Գայլը գնաց կողկոհնձալով: Աղվեսն ասաց գայլին.

... Արի, մի տող էլ կա, այն էլ կարդա՛  
Քայլն ասաց.

— Ես ինչ գիտեի գիրը. մենք ազգե  
ազգ մասպոլժ ենք և մասպոլժի սրդի:





## ✓ ԳՈՂ, ՔԱՀԱՆԱՆ ԵՎ ԱՅՐԻ ԿԻՆԸ

**Մ** քահանա գողացավ այրի կնոջ կովը և կապեց ախոռում: Կինն իմացավ և քահանային ասաց.

— Տեր հայր, հասավ իմ մահվան ժամը, գնանք ախոռ, որ խոստովանեմ մեղքերս:

Այն ժամանակ քահանան կովը տարավ ներսի տուն, այնտեղից ժամատուն և այնտեղից եկեղեցի: Կինն ասա.

— Տեր հայր, վերջին խոստովանությունը մահից առաջ պետք է անե եկեղեցում:

Քահանան կովը բեմ բարձրացրեց և վարագույրը քաշեց նրա վրա: Երբ նրանք մտան եկեղեցի ու նստեցին, կինը բարձրացրեց վարագույրը և ասաց կովին.

— Ո՛վ գարշելի, ես քեզ կով գիտեի, այժմ քեզ ո՛վ արեց պատարագիչ, սոսն ինձ:





## ԴՐԱԽՏԸ ԵՎ ԳԵՂՉՈՒԿ ՄԱՐԴԸ

**Մ** Ե գեղջուկ մարդ աղը շալակին բարձրանում էր դժվար սարով: Տոթ ժամանակ էր: Շատ հոգնեց մարդը և բեռը վայր դնելով սկսեց բամբասել Ադամին և Եվային, թե ինչու նրանք անհամբերությամբ դուրս եկան դրախտից: Իսկույն երևաց հրեշտակը և նրան ասաց.

— Եթե քեզ դրախտ տանեմ, դու կհամբերե՞ս:

Գեղջուկն ասաց.

Ե՛րբ կլինի այդ:

Հանկարծ քունն իջավ նրա վրա և տեսավ, որ դրախտն է ընկել. շատ ուրախացավ: Ապա տեսավ, որ դրախտի մեջ մարդիկ կտրատում են դեռաբույս ծառերը և չհամբերելով ասաց.

— Այդ ի՞նչ մարդիկ եք, որ չոր ծառերը թողած, կտրատում եք կանաչ ծառերը:

Աչքերը բաց արեց, տեսավ, որ դարձյալ նստել է աղի բեռան մոտ, և սկսեց դառն արտասովել: Գեղջուկը նորից տեսավ հրեշտակին և ասաց.

— Այլևս չեմ խոսի:

Նա նորից դրախտ ընկավ և տեսավ, որ մարդիկ կտրած ճյուղերը և փայտը շալակ են կապել և չեն կարողանում շալակել, բայց դեռ դարսում են ճյուղ և փայտ: Չհամբերեց և ասաց.

— Ո՛վ անխելքներ, թեթևացրեք ձեր բեռը, որ կարողանաք շալակել:

Գեղջուկը նորից զարթնեց դժվաք սարի վրա և սկսեց արտասվել: Հրեշտակը երրորդ անգամ նրան դրախտ տաքավ: Նա տեսավ մի մեծ քար, որից կապել էին տասներկու լուծ եղ. ամեն մեկն իր կողմն էր քաշում, բայց քարը չէր շարժվում: Մարդը դարձյալ չհամբերեց և կանչեց.

— Ո՛վ հիմարներ, մի կողմի վրա քաշեք և միասին քաշեք, որ քարը տեղից շարժեք: Զարթնելով գեղջուկ մարդն ասաց.

— Լավ է ես իմ աղք շալակեմ: Եվ բարձրացավ դժվար սարով:





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԽԻԹՍԻ ԳՈՇ

Առակներ

5

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

Գարու հաշիվ	81
Այրի կինը և իր սրգին .	83
Միայնակյացն ու գամփռ շունը	85
Այծեր և գայլեր	87
Ծրկու նկարիչ	70
Առյուծն ու աղվեսը	72
Իմաստուն դատավորը	74
Առյուծը, գայլը և աղվեսը	76
Գինի	78
Միամիտ դողերը	81
Իշխանը և այրի կինը	83
Իմաստուն գինվորը	85
Թագավորն ու օձը	86
Առյուծը, աղվեսն ու արջը	89
Մի կաթ մեղրը պատերազմի պատճառ .	91
Կտակ գանձի մասին .	93
Ուղտը, գայլն ու աղվեսը .	95
Թռչունների թագավոր կռունկը և էշը .	97

Եղբ և ձին	99
Հիմարը և ձմերուկը .	101
Էջին թոռ ծնվեց	103
Աղքատն ու ավետաբանը	104
Հայրն ու որդին	107
Մարդը, բնկույզը և ձմերուկը	108
Եկեղեցին և ջրաղացը	110
Ամենատգետ մարդը	112
Աղվեսն ու որսորդը	118
Իշխանավորը և իմաստունը	120
Աղվեսը և թղթատար գայլը	122
Այրի կինը և խորթ որդին	124
Հալալ մարդը	125
Առյուծն ու մարդը	128
Մուկը և ուղտը	131
Գայլը, աղվեսն ու ջորին	133
Գող քահանան և այլև կիներ	136
Իրախտը և գեղջուկ մարդը	138

Խմբագիր՝ Խ. Հրաչյալնի  
Տեխն. խմբագիր՝ Պ. Սարոյան  
Ծոնարու սրբագրիչ՝ Վ. Կոստանյան

ՎՖ 04522 պահյ. 485, տիրած 10000

---

Հանձնվել է արտադրության 1951 թ. հունիսի 1-ին  
Ստորագրված է տպագրության 1951 թ. սեպտեմբերի 13-ին  
4 1/2 տպ. մամուլ, 1,2 հեղ. մամուլ, 1,5 հրատ. մամուլ,  
Գինը՝ 3 ռ. 60 կոպ.

---

Հայպոլիգրաֆհրատի վարչության № 1 տպարան,  
Երևան, Ալավերդյանի փող. № 65